# Ա Ռ Ա Ր Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ն Ե Ր

## ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ՀԱՅՐԵՆՅԱՑ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2019 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 13-Ի ԹԻՎ 18-Ա-20-Ա, 21-Ն, 22-Ա, 23-Ն և 24 ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Թիվ 18-Ա որոշման 3-րդ կետում նշված «2019» թիվը փոխարինել «2020» թվով:

Թիվ 19-Ա որոշման նախաբանում անհրաժեշտ է հղում կատարել նաև «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 11-րդ կետին:

Թիվ 20-Ա որոշմամբ հաստատված հավելվածի 5-րդ, 6-րդ, 7-րդ կետերում «Աշխատակազմի երկրորդ կարգի մասնագետ /3.3-1/, «Գրադարանավար» և «Հավաքարար» պաշտոնների պաշտոնային դրույքաչափերը սահմանվել են առանց հաշվի առնելու «Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» ՀՀ օրենքում 2019 թվականի նոյեմբերի 19-ին (ՀՕ-223-Ն) կատարված փոփոխությունները, որոնք ուժի մեջ են մտել 2020 թվականի հունվարի 1-ից:

Թիվ 21-Ն որոշմամբ հաստատված N 2 հավելվածի 7-րդ կետը սխալ է գրառված: Հավելված 2.1 չի համապատասխանում «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 13-րդ հոդվածի 9-րդ մասին, համաձայն որի՝ նորմատիվ իրավական ակտով հաստատվող կանոնները, կանոնադրությունները, կարգերը, ցանկերը, աղյուսակները և այլն ամրագրվում են (կամ ձևակերպվում են) նորմատիվ իրավական ակտի անբաժանելի մաս համարվող հավելվածների ձևով:

ԹԻՎ 22-Ա որոշման բովանդակության մեջ չի գրառվել 2019 թվականին իրականացված գույքագրման օրն ու ամիսը:

Թիվ 23-Ն որոշմամբ հաստատված հավելվածի եկամտային և ծախսային մասերի վերնագրերում, ինչպես նաև «Վարչական մաս» սյունակի վերևում նշված «2019» թիվը փոխարինել «2020» թվով:

Թիվ 24 որոշման նախաբանում կատարված հղումը սխալ է: Հղումը պետք է կատարվեր «Տեղական ինքնակառավարման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի 11-րդ մասին և Հայաստանի Հանրապետության Շիրակի մարզի Հայրենյաց համայնքի ավագանու 2018 թվականի դեկտեմբերի 18-ի թիվ 21-Ն որոշմամբ սահմանված կարգի համապատասխան կետի, ենթակետի կամ պարբերության դրույթներին:

*Կատարող՝ Ն.Մարտիրոսյան*
*21.01.2020թ.*